Արձանագրություն N 2

ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների հայտերի բացման և գնահատման նիստի մասին

*** հ. Գետամեջ*** **21 հուլիսի 2020թ**
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սարիկ Ղազարյան – Գետամեջ համայնքի ավագանու անդամ

Հանձնաժողովի անդամներ՝ Մերուժան Պապոյան – Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալ
Ռուզաննա Սարգսյան – Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ցողիկ Առաքելյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1.Հայտերի բացման վայրի, օրվա և ժամվա մասին

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցումով գնման հայտերի բացումը տեղի է ունեցել՝ ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 3-րդ փ, 2-րդ նրբ., 4շ. հասցեում, 2020թ-ի հուլիսի 21–ին ժամը 10:30-ին:

Վերոնշյալ ծածկագրով Գետամեջի համայնքապետարանի շենքի ջեռուցման և օդափոխության համակարգի, շենքին կից քարե պարսպի կառուցման աշխատանքների գնման նախահաշվային գինը կազմում է՝ 4028400 (չորս միլիոն քսանութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Համայնքի բյուջեյով գումար նախատեսված չէ:

Գետամեջի համայնքապետարանի շենքի ջեռուցման և օդափոխության համակարգի, շենքին կից քարե պարսպի կառուցման աշխատանքների ձեռքբերումը կատարվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցումով գնմանը հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
Ա/Ձ Սեդրակ Օհանյան	ՀՀ ք. Երևան, Շերամի փ, 21/16շ., հեռ. 098064006, seto.ohanyan.1988@mail.ru
«Վանդաժի» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աթարբեկյան փողոց թիվ 133, հեռ. 093 188650, vandajiooo@mail.ru
«Վ. Վարդանյան» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Գեղարդի 1-53, հեռ. 093 22-01-77, vvardanyan.am@mail.ru

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ծրարները կազմված են և ներկայացված են հրավերների պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Տվյալներ՝ մասնակցի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու մասին.

2020թ-ի հուլիսի 21-ի դրությամբ ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներից ոչ-ոք ներառված չէր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ.

1. **«Վ.Վարդանյան» ՍՊԸ-ն** հայտում բացակայում է աշխատանքների կատարման վերաբերյալ իրենց կողմից ներկայացվող ծավալաթերթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

1. **Ա/Ձ Սեդրակ Օհանյանի** կողմից ներկայացված աշխատանքների կատարման վերաբերյալ ծավալաթերթում առկա էր հաշվարկման սխալներ,
2. **«Վանդաժի» ՍՊԸ-ն** կողմից ներկայացված փաթեթի բնօրինակ փաստատթղթերում հավելված 1.1-ը՝ սարքերի և սարքավորումների նկարագիրը, դատարկ էր ներկայացված, իսկ փաթեթի պատճեն փաստաթղթերում ներկայացված էր հավելված 1.1-ը, բայց ծավալաթերթով նախատեսված սարքավորումները ամբողջությամբ ներառված չէին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

7. Գնահատող հանձնաժողովի որոշում

Ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի 10-ի թիվ 168 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017թ-ի մայիսի 4 թիվ 526-Ն ՀՀ կառավարության որոշման հավելված 1-ի 41 –րդ կետի պահանջներով՝ ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց, կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով մինչև 2020թ-ի հուլիսի 22-ի ժամը 17:00, ծանուցել և հնարավորություն ընձեռել **«Վ. Վարդանյան» ՍՊԸ-ը, «Վանդաժի» ՍՊԸ-ը և Ա/Ձ Սեդրակ Օհանյանին** վերացնելու սույն ածանագրության 5-րդ և 6-րդ կետերում նշված թերությունները և ներկայացնելու հրավերի պահանջներին համապատասխան ուղղված և պակաս ներկայացված փաստաթղթերը:

ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 22-ին ժամը 17:00-ին՝ ՀՀ Կոտայքի մարզի հ. Գետամեջ, 3-րդ փ, 2-րդ փակուղի, թիվ 4շ. հասցեում՝ Գետամեջի համայնքապետարանում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ **Սարիկ Ղազարյան**

Անդամներ՝ **Մերուժան Պապոյան**

Ռուզաննա Սարգսյան

Քարտուղար՝ **Ցողիկ Առաքելյան**

Արձանագրություն N 3

ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների հայտերի բացման և գնահատման նիստի մասին

ի. Գետամեջ **22 հուլիսի 2020թ**
ժամը՝ 17:15

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սարիկ Ղազարյան – Գետամեջ համայնքի ավագանու անդամ

Հանձնաժողովի անդամներ՝ Մերուժան Պապոյան – Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալ

Ռուզաննա Սարգսյան – Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ցողիկ Առաքելյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. **Հայտերի բացման վայրի, օրվա և ժամվա մասին**

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցումով գնման հայտերի բացման հաջորդ նիստը տեղի է ունեցել՝ ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 3-րդ փ, 2-րդ փակուղի, 4շ. հասցեում, 2020թ-ի հուլիսի 22-ին ժամը 17:00-ին:

2. **ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջների համաձայն պակաս ներկայացված փաստաթղթերի ներկայացման մասին:**

«Վ.Վարդանյան» ՍՊԸ-ն կողմից ներկայացվել են հրավերի պահանջների համաձայն իր կողմից պակաս ներկայացված փաստաթղթերը՝ աշխատանքների կատարման վերաբերյալ ծավալաթերթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. **Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

Ա/Ձ Սեդրակ Օհանյանի կողմից չի ներկայացվել աշխատանքների կատարման վերաբերյալ ուղղված ծավալաթերթը,

«Վանդաժի» ՍՊԸ-ն կողմից ներկայացվել է նոր հավելված 1.1-ը՝ սարքերի և սարքավորումների նկարագիրը, որը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ-ի մայիսի 4 N 526-Ն Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման հավելված 1-ի 42-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Ա/Ձ Սեդրակ Օհանյանի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չ/Հ 1	Չ/Հ 1
«Վանդաժի» ՍՊԸ	2162120	2594544
«Վ. Վարդանյան» ՍՊԸ	3200000	3840000

6. **Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

7. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

Քանի որ ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով ընթացակարգը կատարվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հետևաբար, համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի 10-ի թիվ 168 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017թ-ի մայիսի 4 թիվ 526-Ն ՀՀ կառավարության որոշման հավելված 1-ի 40-րդ կետի 5-րդ մասի բ. և գ. ենթակետերի պահանջների, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Բանակցությունները կվարվեն ՀՀ Կոտայքի մարզ, հ. Գետամեջ, 3-րդ փ, 2-րդ փակուղի, 4շ. հասցեում, 2020թ-ի հուլիսի 27-ին ժամ 11:05-ին՝ 10 (տաս) րոպե տևողությամբ:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի հուլիսի 27-ին ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի

Նախագահ՝ **Սարիկ Ղազարյան**

Անդամներ՝ **Մերուժան Պապոյան**

Ռուզաննա Սարգսյան

Քարտուղար՝ **Ցողիկ Առաքելյան**

Արձանագրություն N 4

ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների հայտերի բացման և գնահատման նիստի մասին

հ. Գետամեջ **27 հուլիսի 2020թ**
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սարիկ Ղազարյան – Գետամեջ համայնքի ավագանու անդամ

Հանձնաժողովի անդամներ՝ Մերուժան Պապոյան – Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալ

Ռուզաննա Սարգսյան – Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ցողիկ Առաքելյան

Օրակարգ

Բանակցությունների վարման նիստի վերաբերյալ

1. **Բանակցությունների վայրի, օրվա և ժամվա մասին**

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար Գետամեջի համայնքապետարանի շենքի ջեռուցման և օդափոխության համակարգի, շենքին կից քարե պարսպի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցումով գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների նիստը տեղի է ունեցել՝ ՀՀ Կոտայքի մարզի, հ. Գետամեջ, 3-րդ փ, 2-րդ նրբ., 4շ հասցեում, 2020թ-ի հուլիսի 27-ին ժամը 11:00-ին:

2. **Բանակցություններին ներկայացած մասնակիցների վերաբերյալ**

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման բանակցություններին մասնակիցներից ոչ ոք չի ներկայացել:

3. **Բանակցություններից հետո մասնակիցների կողմից առաջարկված վերջնական գները.**

Բանակցության մասնակիցների չներկայանալու հետևանքով գնային փոփոխություն չի կատարվել, հետևաբար մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են՝

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չ/Հ 1	Չ/Հ 1
«Վանդաժի» ՍՊԸ	2162120	2594544
«Վ. Վարդանյան» ՍՊԸ	3200000	3840000

3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար Գետամեջի համայնքապետարանի շենքի ջեռուցման և օդափոխության համակարգի, շենքին կից քարե պարսպի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնանշման հարցման մասով հաղթող ճանաչել «Վանդաժի» ՍՊԸ-ը,

որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի, որի հետ սահմանված կարգով առաջարկվում է կնքել համապատասխան պայմանագիր:

Հանձնաժողովի

Նախագահ՝		**Սարիկ Ղազարյան**
Անդամներ՝		**Մերուժան Պապոյան**
		Ռուզաննա Սարգսյան
Քարտուղար՝		**Ցողիկ Առաքելյան**

Հաստատված է

2020թ. հուլիսի 14-ին

_____ Ա. Մուրադյան

Կ.Տ

ԳՐԱՆՑԱՄՏՅԱՆ

Գնանշման հարցումով գնում կատարելու

Պատվիրատուի անունը՝ **ՀՀ Կոտայքի մարզի, Գետամեջի համայնքապետարան**

Գնման ծածկագիրը՝ **ՀՀ ԿՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/2**

Գնահատող հանձնաժողովի
քարտուղար և պատասխանատու՝ _____ Ցողիկ Առաքելյան

Մաս I

Սահմանված կարգով ներկայացված գնման հայտեր

Հ/Հ	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի այն գրության եզից և պատվիրատուի նույն գրության մտից համարները, որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Նշագրություն
			ամիսը, ամսաթիվը	ժամը		
1	2	3	4	5	6	7
1.	Աստղիկ Օհանյանի ՍՁ	Աստղիկ Օհանյանի անձ. AR0254641 04.04.2017թ. ՕՍՏ.	21.07.2020	09:58		
2	ՀՀ Գյումրու Հրազդանի ՀՄՄՀ	Գյումրի քաղաքապետարան ՀԴՖ. 000911362, 29.01.13թ. 027	21.07.2020.	10:18		
3	ՀՀ ֆ. Գյորգյանի անվան ՀՄՄ	Ջանիկ Գյորգյանյան ՀԴՖ. 000367448, 24.01.2013թ. 018/14	21.07.2020.	10:25		

Մաս II
Սահմանված կարգի խախտմամբ ներկայացված հայտեր

Հ/Հ	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները, որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Անհամապատասխանության մասին կցվող արձանագրության համար
			ամիսը, ամսաթիվը	ժամը		
1	2	3	4	5	6	7

ПЛ-321-02-ОЗАСВР-2012
Объединенный неприкосновенный фонд сохранения преобразования с ресурсом 8 3 года.